ՏԵՂԵԿԱՆՔ

պատասխանատու մարմինների վերաբերյալ

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 185-Ա որոշման՝ <<Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին>> համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը:

Ազգային անվտանգության ծառայություն

ՏԵՂԵԿԱՆՔ

վավերացման նպատակահարմարության մասին

<<Տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին>> համաձայնագրի նպատակն է զարգացնել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում ՀԱՊԿ անդամ պետությունների փոխգործակցությունը:

Համաձայնագրի վավերացումը նպատակահարմար է՝ ելնելով ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության համակարգի հետագա զարգացման, տեղեկատվական անվտանգության ոլորտում միջպետական համագործակցության զարգացման, միջգերատեսչական փոխգործակցության ամրապնդման և սպառնալիքներին հակազդելու մեխանիզմների կատարելագործման, ՀԱՊԿ անդամ պետությունների փոխհարաբերությունների համաձայնեցված կանոնների մշակման, դրանց միջազգային մակարդակի բարձրացման, տեղեկատվական տարածքում անօրինական գործունեության հակազդմանն ու չեզոքացմանն ուղղված համատեղ միջոցառումների անցկացման, ՀԱՊԿ անդամ պետությունների տեղեկատվական անվտանգության հիմքերի ձևավորմանն ուղղված համատեղ գործնական միջոցառումների պայմանների ստեղծման և իրականացման անհրաժեշտությունից:

Ազգային անվտանգության ծառայություն